

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծրար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ո Ւ Կ

Ծանոթացման սողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Գրութիւնք եւ չեմ
տրութիւն

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

ՅԱՆՈՒՆ Կ. ՀՃԻ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Կը վաճառէ Սօֆիա քաղաքի
վիճակահանութեան տոմսերը .
Գին՝ 1/4ը 3 ֆր. 1/8ը 1.50

ԱՄԵՐԻԿԱՅԻ «ՈՉ ԿԱՐԵՄԲ» Ը

Մինչ ողբերգութեամբ հոս հոն
տակաւին հանրագրութիւններ
կը պատրաստեն Մ. Բուզլէլի
միջամտութիւնը խնդրելու հա-
մար ի նպատակ հայկական Դատին,
անգլիան Հանրապետութեան ար-
տաքին գործոց նախարարը Մ.
Բուզլէլի բացատրական պատասխան-
ներ կուտայ Ամերիկացի և Եւ-
րոպացի նշանաւոր անձնաւորու-
թիւններէ ստորագրուած խնդ-
րագիրները ներկայացնող կը-
րանտ Բաքիաղի քաղաքացիներ
և Մ. Ճէյմս Բէյնթոնին : [տես
«Իրաւունք» թիւ 18 և 19]

Որոշակէս «ոչ կարեմք» պա-
տասխանը ստանալէ յետոյ կըր-
կին միեւնոյն դիմումները շարու-
նակել գուցէ աւելորդ կը նկատ-
ուի շատերէ. բայց քաղաքական
նպատակներու ձգտողներ ան-
յաջողութեանց առջեւ պէտք չէ
երբեք վճատին, այլ ընդհակա-
ռակը կրկնապատկելու են իրենց
չանքերը : Ասկէ վատ, եթէ քըն-
նենք Մ. Բուզլէլի «ոչ կարեմք»
ը արգարացնելու համար առաջ
քշած պատճառները, կը տեսնենք
թէ անսնք արգարացողիչ բլա-
ւէ շատ հեռի են :

Մ. Բուզլէլի բացատրական պա-
տասխաններուն գլխաւոր պատ-
ճառ ցոյց կուտայ Մընթոնի ան-
գիր վարդապետութիւնը, ըստ
որում Միացեալ Նահանգները դա-
րէ մը ի վեր չեն խառնուիր եղեր
Եւրոպայի գործերուն, ինչպէս որ
Եւրոպական պետութիւններն ալ
չեն միջամտեր արեւմտեան կի-
սագոնտի ինքնիշխան երկիրնե-
րուն : Բայց յայտնի է թէ բա-
ցարձակապէս ճիշդ չէ այս պատ-
ճառաբանութիւնը. նախ թէ հայ-
կական նահանգները Եւրոպայի

մաս չեն կազմեր, այլ Ասիայի
ցամաքին վրայ կը գտնուին. երկ-
րորդ՝ որ այդ նահանգներուն
մէջ Ամերիկան իր հաստատու-
թիւնները եւ որոշ շահերը ու-
նի. երրորդ՝ գեռ քանի մը տա-
րի առաջ՝ նոյն Ամերիկան էր որ
իր զինուորները Ասիայ, Չինաստա-
նի մինչեւ խորքը զրկեց, գեռ
երէկ ռուս—ճաբոնական պատե-
րազմին միջամտեց, նոյն Ամե-
րիկան է որ այսօր ալ Ալճէզիրա-
սի համաժողովին կը մասնակցի
և Ամերիկէի գործերուն կը մի-
ջամտէ եւրոպական պետութեանց
հետ քով քովի կեցած :

Այս ամենէ վատ հայկական Հար-
ցը գերազանցապէս մարդասիրա-
կան ու քաղաքակրթական գործ
մը բլաւարտ. Ամերիկայի միջամե-
տութիւնը՝ դժուար հասկնալի
թեան ու է կանկած չտալով,
չպիտի հանգիպէր լուրջ ընդի-
մութեան Պէռլինի դաշնագիրը
ստորագրող վեց պետութեանց
կողմէ, այլ ընդհակառակը ասոնց-
մէ գոնէ երեքը, Անգլիա, Ֆրանս-
սա և Իտալիա, ուժ պիտի տային
Մ. Բուզլէլի առաջարկին : Այս
հաւանականութիւնը աւելի կը
չեչտուի այն իրողութեամբ որ
Եւրոպացուց հսկայ հանրագիր—
խնդրագիրը ստորագրող և խրմ-
բագրող անձնաւորութիւններէն
շատերը նշանաւոր քաղաքագէտ-
ներ և ոմանք նախկին նախարար-
ներ էին :

Այս, Մ. Նահանգներու ար-
տաքին գործոց նախարարին ցոյց
տուած պատճառները միջամտու-
թեան լուրջ արգելքներ չէ կա-
րելի նկատել, այլ պարզ պատ-
րուակներ. որոնց տակ պահուած
կան կամ անխոստովանելի նը-
կատումներ և կամ հայկական հար-
ցի մասին Ամերիկայի մէջ հան-
րային կարծիքին անպատրաստ
լինելը, որ կրնար կառավարու-
թեան գէժ գեռաբութիւններ
հանել, Հարկ է հոս յիշել թէ
Քիշնէվի հակահրէական շարժու-
մին առթիւ Մ. Բուզլէլի չը վա-
րանեցաւ Չարի կառավարութեան
զիտողութիւն ուղղել. բայց այդ

պարագային Հրէաները բոլոր
ամերիկեան մամուլը ալմուկնե-
րով լեցուցին և իրենց նպաս-
տաւոր հանրային կարծիք մը
գոյացուցին, որով մղուեցաւ
հանրապետութեան նախագահը
իր դիտողութիւնը ընելու Չարին.
սակայն սա գեղաճ գէժքով մը
հասկցուց թէ իր ներքին գոր-
ծերու մասին դուրսէն դիտողու-
թիւններ լսել չուզեր, Բայց
Թուրքիոյ համար խնդիրը բո-
լորովին տարբեր է, միջազգային
դաշնագիրներ Սուլթանի կառա-
վարութիւնը ուղղակի քրիստոնե-
այ մեծ պետութեանց հսկողու-
թեան տակ դրած են, մինչդեռ
Չարը իր երկրի բացարձակ տէ-
րն էր և ոչ ոքի հաշիւ տալու
պարտաւոր չէր. հետեւաբար Մ.
Բուզլէլի միջամտութիւնը ա-
նիրաւ կերպով ուրիշ պետու-
թեան ներքին գործերուն խառ-
նուիլ չպիտի համարուի, ինչ որ
Մ. Բուզլէլի ջանայ պատրուակել
այլ դաշնագիրներու և հանդի-
սաւոր խոստումներու գործադրու-
թեան անառարկելի պահանջն էր
որ պիտի դրուէր Սուլթանին առ-
ջեւ : Սակայն բացարձակապէս
ինքնակալ Չարին դեռ 2—3 տա-
րի առաջ դիտողութիւն ուղղող
Բուզլէլի այսօր կը վարանի
պատասխանատու Սուլթանին նոյ-
նը ընելու, որովհետեւ հայերս
դեռ չկրցինք Ամերիկայի հանրա-
յին կարծիքը պէտք եղածին պէս
յուզել և յառաջ բերել հայանը-
պատ ընդհանուր շարժում մը
որ խթանէր և մղէր Մ. Բուզլէլի-
թը հայապաշտպան քաղաքակա-
նութեան մը հետեւելու :

Ամերիկեան հանրային կարծի-
քը պատրաստելու այս թերին
պէտք է լեցնեն գլխաւորապէս
Ամերիկայի հայերը. եւ այս մե-
ծագոյն ծառայութիւնն է որ կր-
նան մատուցանել անոնք իրենց
մայր հայրենիքին ու եղբայրնե-
րուն որովհետեւ ամերիկեան մեծ
հանրապետութիւնը կոչուած է էն
կարեւոր դերերը կատարել մի-
ջազգային խնդիրներու մէջ.
ռուս—ճաբոնական երէկի հաշ-

տութիւնը Մ. Բուզլէլի կը պար-
տինք. այսօր Ալճէզիրասի հա-
մաճայնութիւնն ալ գլխաւորաբար
անոր վերջի հրահանգին արդիւն-
քնն է :

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ
(Շար. Նախորդէն եւ վերջ)

14. Հայ պատգամաւորներ — Ազգի-
նիստաբաց այլ կողմից անհրաժեշտ են
վճռական միջոցներ անկարգութիւննե-
րը վերացնելու համար :

Թուրք պատգամաւորները ընդունե-
ցին ալդ առաջարկը :

15) Հայ պատգամաւորներ — Որոշե-
լ հայ-թրքական խռովութիւններէջ ա-
ռաջ եկած վնասներ չափն ոչ նրանց
հատուցումը զանազան գիւղերում եւ
քաղաքներում : Այդ հատուցումը կա-
տարի ազմիրխատական ճանապարհով
ստանձին յանձնաժողովներ յասնակ-
ցութեամբ, յանձնաժողովներ, որոնք
կազմուած լինեն իշխանութեան ներ-
կայացուցիչներից ու ազգաբնակու-
թեան ընտրեալներից :

Թուրք պատգամաւորներ — Չը մըն-
տելով վնասների հատուցման ցան-
կայի լինելը այն միտքը յայտնեցին,
որ վնասների ու հատուցման չափը պի-
տի որոշուի համաձայն օրէնքի. դա-
տասնական կարգով :

Հայ պատգամաւորներ — Ցանկալի է
իրանց հին տեղերը վերադառնալու,
հնարաւորութիւն չունեցող գիւղերին
հողեր տալ : Դրա համար ցանկալի է
օգուտել տեղներում կազմելիք յանձ-
նաժողովների ցուցմունքներից :

Թուրք պատգամաւորներ — Թուրքե-
լը միացան հայերի այդ ցանկութեանը,
սակայն այն պայմանաւ որ հողափո-
խութեան զէպքերում, հողափոխութիւ-
թիւնը կատարուի երկու կողմերի հա-
մաճայնութեամբ :

17. Հայ պատգամաւորներ — Ցան-
կալի է հարկերի հաւաքումը թեթեա-
ցնել այն տեղերում ուր կատարուած
են աւերմունքներ. քացի այդ տալ վը-
նասուած գիւղացիութեանը կատարու-
ական փոխառութիւն տնտեսութիւ-
նը վերականգնելու համար :

Թուրք պատգամաւորներ — միացան
այդ առաջարկին :

18. Հայ պատգամաւորներ — Հարկա-
ւոր է նպատակը Հայերի եւ Թուրքերի
մէջ կատարելիք հողափոխութեան
գործին Գանձակ քաղաքի աւերած

Թագերի վերաբերմամբ :

Թուրք պատգամաւորներ. — Հողավոր-
թութիւնը պէտք է կատարել երկու
կողմերի միաձայնութեամբ միայն :

19. Հայ պատգամաւորներ. — Յան-
կալի է, որ ազմիրնաւորացիան ամենա-
վերճական միջոցներ ձեռք առնէ հա-
ղորդակցութեան ճանապարհները ան-
վատեղ դարձնելու համար եւ որ ան-
պայման արգելի մասնաւոր մարդկանց
խուզարկութիւններ կատարելը, ինչ
պատրուակով էլ որ լինի այդ :

Թուրք պատգամաւորները միացան
այդ առաջարկին :

20. Թուրք պատգամաւորներ. — Յան-
կալի է, որպէսզի զինուորական ու
ազմիրնաւորական միջոցները, որպիսի
են էքզէկուցիա, աքսոր եւ այլն, իրա-
զորւեն տեղական ազգաբնակչութեան
ընտրեալներէ կազմւած խորհուրդնե-
րի համաձայնութեամբ : Այդորինակ
խորհուրդն կազմեն պիտի գնն-նա-
հանգապետների վարչութեանը կից,
իսկ զինուորական զորութիւնը վերա-
նալուց յետոյ, նահանգապետների ատ-
եանին կից :

Հայ պատգամաւորները միացան այդ
առաջարկին :

21. Թուրք պատգամաւորներ. — Յան-
կալի է օգնել աւերւած գիւղերի այն
գիւղացիներին, որոնք ցանկանան
վերադառնալ իրենց հին տեղերը : Ան-
հրաժեշտ է միջոցներ ձեռք առնեն
նրանց ապահովելու համար :

Հայ պատգամաւորները միացան այդ
առաջարկին :

22. Թուրք պատգամաւորներ. — Բացի
պ. Հալիբեից, բոլոր անհրաժեշտ ճա-
նաչեցին բոլոր ազգաբնակչութիւնը զի-
նաթափ անել միայն այն ժամանակ, երբ
կընդունեն յիշեալ բոլոր ցանկութիւն-
ները եւ երբ ձեռք առնեն ցոյց տըր-
ւած բոլոր միջոցները : Պ. Հալիբեւը
պնդում էր, որ անհրաժեշտ է անյե-
տաձգելի կերպով զինաթափ անել ազ-
գաբնակչութիւնը, մանաւանդ քաղաքա-
ցիներին :

Հայ պատգամաւորներ. — Ամենից լաւ
կը լինի, եթէ թուրքերի այդ առա-
ջարկը ռեզոլուցիայից դուրս հանել,

որովհետեւ այդ առթիւ կան ընդհա-
նուր օրէնքներ, որոնցով էլ հարկա-
ւոր է ղեկավարել : Բայց կարելի է
այդ առթիւ ընդունել այս որոշումը
ժամանակաւորապէս, մինչեւ խաղա-
ղութեան հաստատումը, ցանկալի է
դադարեցնել ազգաբնակչութիւնը զինա-
թափ անելը :

23. Պատգամաւոր Մելիք-Բէգլարեա-
նը ցոյց տուեց ազգաբնակչութեան դաշ-
տային պարագայութիւնները ապահովելու
անհրաժեշտութիւնը :

Թուրք պատգամաւորները միացան
այդ առաջարկին :

Այդ խնդրի մանրամասն քննութիւնը
յանձնեց քոչի հարցով զբաղւող յանձ-
նաժողովին, այնպէս որ այդ յանձնա-
ժողովի որոշումները այդ առթիւ հա-
ւանութիւն գտան պատգամաւորների
կողմից :

24. Թուրք պատգամաւորներ. — Պատ-
գամաւոր Շահմալիեւը առաջարկեց
գաւառական նախաձեռնութիւնների վարչու-
թեանը կից կազմել յանձնաժողովներ
(առանձնապէս նախագծւած խորհուրդ-
ների կողմից) որոնք կազմւած յի-
նեն ազգաբնակչութեան բոլոր դա-
սակարգերի ընտրեալներէ, եւ յանձ-
նել այդ յանձնաժողովներին անցնել
դաւառի բոլոր գիւղերը եւ ծանօթա-
ցնել ազգաբնակչութեանը այս խորհր-
դակցութեան գործունէութեան եւ նրա
որոշումների հետ, եւ ամեն կերպ նը-
պաստել բոլորիս համար ցանկալի
խաղաղութեան վերականգնելուն :

Հայ պատգամաւորները միացան այդ
առաջարկին :

ՓՈԽԱՐԱՅԻ ԶԱՌԸ

Համաժողովի 11րդ. նիստը
փոխարքայ Վարանցով-Տաշքովի
նախագահութեամբ սկսաւ : Վերը
կարգաւ թոււած առաջարկները
ու եղբակցութիւնները նախորդ
նիստին փոխարքայի գիւնդապետ-
տէն կարգացուած ըլլալով, նո-
րին բարձրութիւնը հետեւեալ

ճառով բացաւ Համաժողովի այս
վերջին նիստը :

Ձեր նիստերում, դուք չօչակեցիք
մի շարք խնդիրներ, որոնք, մեծա-
մասնաւոր, չեն լուծուած տրւած թո-
պէի անյետաձգելի պահանջները : Երբ
տունը այրւում է, այլ եւս ժամանա-
կը չէ մտածելու մէջ ինչ նիւթից
եւ ինչ պլանով պէտք է կառու-
ցանել կրակին դիմացող շոր չի-
նութիւնը :

Պէտք է որոշել որտեղ է հրդեհի
կեդրոնը եւ նրա վրա ուղղել հանգ-
ցնելու բոլոր միջոցները : Բայց այդ
կեդրոնը դուք չորոշեցիք, թէեւ մեզ-
նից ամեն մէկին, տրւած թոպէում
կատարելապէս յայտնի են հրդեհը
սնուցանող պատճառները :

Անկարգութիւնները սնուցանում են
մի կողմից ապօրինի զինւած կազմա-
կերպութիւնները եւ միւս կողմից,
աւազակների խմբերը, որոնք գաղտնո-
ւէն յաճախ ղեկավարում են ազդե-
ցիկ անձին : Այդպիսի երեւոյթներ
կառավարութիւնը տանել չի կարող,
եւ ամենալճառակաւ միջոցների է
զիմում տրուել եւ կը շարունակենք
գիմել կարգը խանգարողներին հալա-
ծելու համար : Թաղաւոր Կայսեր
հաճելի է, որ հայ-թուրքական կոթիւ
վերջանայ :

Ձեզ եմ գիմում, պարոններ, որ
դուք եւս գործ դնէք ձեր ազդեցու-
թիւնը յարձակումները եւ կողոպ-
տումները դադարեցնելու եւ յայտ-
նէք ժողովրդին թէ Թագաւորի կամ-
քը եւ թէ խստութեան այն միջոցնե-
րի մասին, որոնք պիտի շարունակ-
ւեն մինչեւ չարիքը արմատախիլ լի
նելը :

Գործնական միջոցների թոււով, ո-
րոնց մասին դուք համաձայնութեան
եկաք, մի քանիսը եւ ընդունելի եմ
գտնում եւ դոքա մասին կը յայտա-
րարի ձեզ : Այս պահին եւ կը կամե-
նայի կանգ առնել մի կէտի վրայ :
Ընդհանուր զինաթափի խնդիրը քըն-
նելիս, նիստի անդամներից մէկը—
Ա. Իվ. Խաթիսով—առաջ բերաւ իմ
կարծիքը այդ առարկայի մասին : Ես

կարծում եմ որ դրչի մի թափով չի
կարելի ժողովրդին ստիպել զէնքը
յանձնելու, որը նա կրել է հազարա-
ւոր տարիների ընթացքում : Մեծա-
մասնութեան մօտ եղած զէնքը ինք-
նադաշտպահութեան համար է, նրան
կրելու պատճառը անհրաժեշտու-
թիւնն է : Բայց ես կը համաձայնեի
ընդհանուր զինաթափի օգտակարու-
թեան հետ, եթէ ես այդ միջոցի գործ-
նական հնարաւորութեան մէջ հա-
մուշտ լինէի : Սակայն ես համոզու-
ւած եմ, որ միայն խաղաղ մարդիկ կը
յանձնեն զէնքը, իսկ նոքա, որոնք
պահում են զէնքը յանցաւոր նպա-
տակների համար, այն կը թագցնեն :
Այդ պատճառով ընդհանուր զինա-
թափի օգուտը ես չեմ ընդունում :
Բայց ես պնդում եմ որ անհրաժեշտ
է խել զէնքը բոլոր զինուած կազ-
մակերպութիւններից, հասարակու-
թիւններից եւ մասնաւոր անձերից
որոնք ի չարն են գործ դնում զէնքը,
կարծում եմ որ կը գայ ժամանակ, երբ
կովկասեան ազգութիւններն էլ իրանց
վրայից զէնքը կը հանեն, որպէս մի
աւելորդ բեռը : Այդ ժամանակը կը
գայ այն ժամանակ, երբ իսկական քա-
ղաքակրթութիւնը հիմնուած սիրոյ
վրայ դէպի մերձաւորը, եւ յարգան-
քի վրայ գէպի օրէնքը : Ժուտք կը
գործի կովկասի բոլոր անկիւնները եւ
ամենքի բաժին կը դառնայ—մեծի
թէ փոքրի :

Վերջացնում եմ նրանով, որ ես կա-
րող էի ձեր խորհրդակցութիւնից ըս-
պասել աւելի իրական միջոցների մը-
չակում, բայց ես նրանից այս հա-
մոզումն եմ դուրս բերում, որ դուք
ամենքդ ձգտում էք դէպի խաղաղ
համաձայնութիւն : Ներշնչեցեք արդ
այդ ձգտումը ձեր ցեղակիցներին,—
եւ խաղաղութիւնը կիրաւործուի :

«ԱՐՇԱԼԱՅՍ»



«ԻՐԱՆԻՆԻՔ» ԹԵՐԹՈՆԸ

ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ

(Շար. նախորդ թիւէն)

ՀԱՏՈՒԱԾ 2.

Պատերազմից առաջ մի օրաթեր-
թի օտար գրականութեան բաժնին
գլխաւոր թղթակիցն էի : Եւ այժմ իմ
քաղցին, սեղանի վրայ կանոնաւոր
շարուած կային իմ բոլոր աշխատու-
թիւնները, դոյնզոյն կողքերով, նը-
րանց դիտելով հրճուած եւ ուրա-
խանում էի : Նրանց կարդալու անդի-
մադրելի փափաքը յղացաւ ինձա-
նում, եւ ես սկսայ միայն թղթա-
տել նրանց : Տեսնելով նրանց մէջի-
գեղեցիկ հիւստեան տառերն ու գըլ-
խատառերը ծիծաղեցի, գուցէ մի ան-
միտ ծիծաղ, բայց զսպել չէր կարելի :
Ինչքան զեղեցկութիւն միտք եւ
ճաշակ էին կրում նրանք. ինչ աստի-
ճանի հանճար եւ ճաշակ էր հարկաւոր
առաջ բերել կարենալու համար, այդ-
քան պարզ, վայելուչ, ներդաշնակ եւ
պերճախօս տառեր :

«Այժմ պէտք է սկսիլ գործի», ա-
սացի լրջօրէն :

Վերցրի գրիչս վերնագիրը գրելու
եւ որպէս մի թելի կապուած գորտ
ձեռքս սկսեց նետուել այս եւ այն
կողմ : Գրչիս ծայրը խրեց թղթին
պատեց նրան, անդիմադրելիօրէն
ցաթկեց դէս դէն եւ առաջ բերաւ
տեղը, կոտորատուած, ծուռ ու մուռ
եւ բոլորովին անմիտ գծեր : Ես չը
պոռացի, եւ ոչ էլ շարժուցի, հա-
պա լինելով սոսկալի իրականութեան
իրադէշ սառած միացի, մինչքան իմ
ձեռքը ցաթկուտում էր մաքուր, ճեր-
մակ թղթի վրայ, իսկ մատներս
ցնցում էին, այնքան կենդանի, յի-
մար եւ սարսափելի որ կարծես նը-
րանք, այդ մատները դեռ ճակատում
էին, տեսնում կրակը արիւնը եւ լը-
սում անկարագրելի ցաւերի տնքում-
ներն ու հառաչանքները : Կարծես
այդ խնթիցած մատները բաժանուել
էին ինձանից : Նրանք կենդանի էին
եւ դուարի, դառել մի մի աչքեր ու
ականջներ եւ ես սարսույթից պաղած
գիտում էի նրանց վայրի պարը,
թղթի վրայ :

Լսութիւն էր տիրում, կարծելով
որ աշխատում եմ, նրանք փակել էին
դռները, որ մի գուցէ խանգարեն մի
անդդոյն ձայնով եւ ես մենակ նստած
դիտում էի ձեռքիս անզսպելի ցնցու-
մը :

«Ոչինչ», ասացի յանկարծ բարձրա-
ձայն, ձայնս լուռ ու մինակ սենեա-

կում տարածուեց, բաղխուեց պատերն
ու փշրուեց : «Ոչինչ», եւ պէտք է
ներշնչեմ : 24° որ Միլիընը կոյր էր,
որ իրա, «զրախոր Նորից ձեռք ձգ-
ւած» գրեց : Ես կարող եմ մտածել
եւ դա ամենից կարեւորն է արգարիւ
ամեն ինչէ :

Ես մտքումս սկսայ հնար ել մի
մտացի պարբերութիւն կոյր Միլիթո-
նի վրայով բայց բառերը խառնակու-
ւում եւ ցրում էին, ինչպէս տառեր
փռած տպագրական շրջանակից, եւ
երբ պարբերութիւնը վերջացրի մո-
ռացի էի սկիզբ : Յետոյ փորձեցի յի-
շել թէ ի՞նչու համար, կամ թէ ինչ
բանից թելադրուած այդ օտարոտի
պարբերութիւնը սկսայ հնարել, եւ
կարող չիղայ : «Դրախոր Նորից
ձեռք ձգուած» կրկնեցի, եւ կարող
չիղայ ըմբռնել թէ դա ինչէ նշանա-
կում :

Յետոյ նկատեցի որ յաճախ չատ-
րաներ եմ մոռանում միտքս չափա-
ղանց ցրուած վիճակումն է, չփոթում
եւ նոյնիսկ նմանօրինակ դէմքեր
եւ մտաւորութեան մէջ : Երբեմն
պարզ խօսակցութեան մէջ, Երբեմն
յիշում եմ բառեր եւ չեմ հասկա-
նում նման նշանակութիւնը : Մը-
տածեցի օրուայ ինչպէս անցկացնելս :
Մի տարօրինակ կարծատեւ օր, կրտ-
րատուած որպէս իմ սրունգները
դարպակ եւ խորհրդաւոր անցքեր եւ

տկար անգլխակից ժամեր այսչափ
սւրիչ ոչինչ :

Ուզեցի կանչել իմ կնոջ, բայց նը-
րա անունը չէի յիշում : Չը զարմա-
ցայ եւ ոչ էլ վախ զգացի այլ մեղմիւ
ասացի :

«Կին 1» :

Եւ այս անկապակից բառը մեղմիւ
հնչեց եւ մեռաւ առանց մի պատաս-
խան բերելու : Լուռ է ամեն ինչ :
Գործելիս նրանք զրուցանում են
ինձ խանդաբիւ : Մի հիանալի խաղաղ
գրասենեակ, գիտնականի յարմար մի
գրասենեակ, նրա խաղաղութիւնն ու
լուռութիւնը ներշնչում է մտածելու
եւ ստեղծելու կրօնով :

... Մի ներշնչում, մի սրբաշուն
ներշնչում է գալիս ինձանում : Արեւ-
գալը ծագում է իմ գլխում, բարձը-
րանում, իրա տաք եւ արարչական
ճառագայթները սլանում են ամբողջ
աշխարհի վրայ եւ սրբուած ծաղիկներ
եւ երգեր, ծաղիկներ եւ երգեր : Դը-
րում եմ շարունակ առանց դադար
առնելու, ոչ յօգնութիւն եմ զգում եւ
ոչ էլ զբոլում, հապա կարող եւ նը-
ւերական ներշնչման թեւերի վրայով
ազատ թռիչք առնում : Դրում եմ ինչ
որ մի երեւելի բան, մի անմահ բան—
ծաղիկներ եւ երգեր—ծաղիկներ եւ
երգեր :

(Շարունակելի)

ՊՈՂՈՍ ՓԱՇԱՆՆՈՒՊԱՐ

ԵՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Վսեմ. Պողոս փաշա 40,000 ոսկիով ազգին բարեբարելու իր որոշումը գործադրելու ճամբայէն չէ շեղած բարեբաղդաբար : Այդ ահագին գումարին մէկ մասովը Դոնիկէի ազգ. վարժարանը կառուցանելու ձեռնարկին հետ , որոշած է «որոշ թուով հայազգի պատանիներու բարձրագոյն կրթութիւն մը ստանալու համար հարկ եղած ծախքը հոգալ , եւ առ այս կըսէ «Լուսաբեր», յառաջիկայ դպրոցական շրջանին թուով աշակերտներ կառավարական երկրորդական վարժարանները պիտի զրկուին :»

Եգիպտահայ թերթէն առնուած այս տեղեկութիւնէն եւ անկէ առաջ ստացուած լուրերէ կը հասկնանք թէ Պողոս փաշան Առեւտրական վարժարան մը հիմնելու իր որոշումը բարեփոխած է : Կերեւայ թէ միայն առեւտուրի կամ շուկայի մարդ պատրաստել նախամեծար համարած է այլ եւ այլ ասպարէշներու համար՝ ընդունակութեանց համեմատ՝ մարդիկ պատրաստել բարձր վարժարաններու եւ համալսարաններու մէջ :

Եւ եթէ այս անգամ տասը հայ պատանիներ Եգիպտոսի համար եւ եգիպտական բարձր վարժարաններու մէջ պատրաստելու ծանուցում ընել տուած է , վաղն ալ անշուշտ պիտի իմանանք նորին Վսեմութեան ուրիշ մէկ ծանուցումը տարբեր հայ գաղութներու որոշ թիւով զաւակները իրենց միջավայրերուն յարմար պատրաստելու նպատակաւ : Այս կակնկալնք ու կը սպասենք վստահօրէն, որովհետեւ Նուպարեան գերդաստանը ոչ թէ միայն Եգիպտահայուն , այլ ամբողջ հայութեան պարծանքներէ մին եղած է եւ հետեւաբար ամբողջին աւերկալութեան առարկան է երկար տարիներէ ի վեր Մանաւանդ Պուլկարիոյ հայութիւնը իր թուի առաւելութեամբ եւ բաղդատաբար աղքատութեամբ ամենէ աւելի բարբարոսելու պէտք ունի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Ինչպէս ֆրանսական յեղափոխութիւնը բոլոր արեւմտեան ազգերը ցնցեց եւ շատ մը ժողովուրդներ իր ետեւէն քայեց , նոյնը ընելու նշաններ կը տեսնուէին այսօր Ռուսիոյ յեղափոխութեան հետեւանքով Արեւելքի կամ Ասիոյ մէջ :

Պահ մը իրենց անուշ քունին մէջ թողով Ներսիսաբեկ թուրքերու յեղափոխութիւնը (1) , Պարսկաստանը ամենէ առաջ ազդուողը եղաւ Ռուսիոյ յեղափոխութիւնէն : Այս վերջին Յունվարին էր որ թերթին մէջ ցոյցեր տեղի ունեցան, կառավարութեան զէմ. հոգեւորականութիւնը եւ վաճառականութիւնը թեհրանէն ելլելով գնաց ապաստանեցաւ Շահ-Ապտուլ-Ազիզի մեծնապաշին մէջ եւ որոշ պայմաններու պահանջներ առաջարկեց կառավարութեան եւ Շահը այդ պահանջներէն մէկ քանին ընդունեց ու անոնք համաձայնելով իրենց անձեռնմխելի ապաստարանէն դուրս եկան :

Շահը արդէն փափաքող է սահմանադրութիւն տալու , բայց ճշմարիտ

ըսելու համար այդ երկրի ժողովուրդը ընդունակ չէ Սահմանադրութեամբ ինքզինք կառավարելու , որովհետեւ հոն ժողովուրդը ըստեւած ամբողջ իր տգիտութեամբ կրօնականներու հոգատեբերու ձեռք կենդանի գործիք մըն է : Այդ երկրին նախ պէտքէ աւատականութիւնը, ճորտութիւնն վերցնել, պետական լուրջ օրէնքներ եւ դատարաններ հաստատել , նախական կրթութիւնը ընդհանրացնել եւ յետոյ Սահմանադրութիւնը հրատարակել : Բայց Շահը կաճապարէ Սահմանադրութիւն տալու մէջ , թէեւ երկրին այլեւայլ կողմերէն թէհրան հաւաքուած պատգամաւորներ առ այժմ անպէտ տեսած են սահմանադրութիւնը :

Թուրքիոյ ժողովուրդը, նոյն իսկ իսլամ ժողովուրդը, բաղդատամբ Պարսկաստանի բնակչութեան ընդունակ կրնայ համարուիլ Սահմանադրութեամբ կառավարուելու , եւ այսօր մասըր Երիտասարդ թուրքեր այդ պահանջը կը դնեն Սուլթանին վրայ : Այս պատճառներով Սուլթան Համիտը շատ վրդովեցաւ երբ իմացաւ թէ Շահը իր երկրին Սահմանադրութիւն կուտայ : Լծնտոն հրատարակուող Արաբական «էլ-Հիլար» է լրագրին ստացած մասնաւոր տեղեկութիւնները կը հաստատեն թէ Սուլթանը այդ լուրը առնելուն պէս , Պուրսկական դեսպանին միջոցաւ Շահին կիմացնէ թէ Պարսկաստանի մէջ ազգային ժողով բանալու ժամանակը դեռ չէ հասած : Թէ Սահմանադրութիւնը ոչ պետութեան եւ ոչ հասարակութեան օգտակար կրնայ ըլլալ որովհետեւ պարսկի ժողովուրդը դեռ շատ յետ մնացած է քաղաքակրթութեան մէջ ու տգէտ է եւ չկրնար արքայական դահի բարձրութիւնէն տրուած շնորհէն օգտուիլ :

Շահը շնորհակալութիւն յայտնելով միտեղ պատասխաններ է, թէ պարսկի ժողովուրդի մէջ երեւան եկած քաղաքակրթական ու յառաջդիմական ձգտումները ստեղծելու եւ առաջ բերելու նախապիսի աղետաւոր անձեր, որոնք ընդունակ են աշխատելու եւ օգտակար ըլլալու իրենց ազգին ու հայրենիքին համար, ինչպէս որ եղած են բացարձակ ինքնակալութիւն ներկայացնող կառավարութեան մէջ : Շահը աւելցուցեր է նաեւ թէ ժողովուրդը էն աւելի կը սիրէ այն միապետը որ իր մէջ կը մարմնացնէ արդարութիւն, ազատութիւն եւ հաւասարութիւն : Ուստի Շահը ինք հաւատացած է որ Պարսկաստանի ազգային ժողովը բացի օգուտէ ոչ մէկ վնաս չտար Շահին ու ժողովուրդին :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՏՕՊԻՐՁԷՆ

Մարտ 18 1906

«Ռազմիկի 40 թիւին մէջ «Ալիսի Որդեգիրը» ստորագրութեամբ Տօպրիշէն գրուած գրութիւն մը կարդացի , որը զարմանալի ըլլալէ աւելի արգահատելի էր : Յօդուածագիրը լաւ կընէր եթէ, փոխանակ գիւղը նստելով կարճ ժամանակի մը մէջ ճանչցած ու այդքան յափշտակուած բարեկամէն ստացած տեղեկութեանց վրայ հիմնուելու , ինք անձամբ քաղաք իջած ատեն խնդիրը մօտէն ու սուսնախորհելու , այն ատեն պիտի համոզուէր թէ՝ Տօպրիշի համար անգին մար-

գարիտ մը կարծած այդ ցաւագարը , կատարեալ փորձաշար մէջ այդտեղի համար , եւ եթէ՝ յօդուածագրին անարգած ու նախատած Տօպրիշիք չըլլային , իր յիմարութիւններովս թէ՝ իր անձը եւ թէ՝ հոս գտնուող խեղճ գաւառացիները կառավարութեան հաւատանքին պիտի ենթարկուէին , չեմ ուզեր անուշը տալ այդ արարածին վասնզի Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ այլ եւ այլ քաղաքներու մէջ ալ նըմանօրինակ յիմարութիւններ գործած ըլլալով հանրածանօթ դարձած է , հետեւաբար այսպիսի մէկը չափազանցօրէն գովաբանող մը դատողութենէ ու տրամաբանութիւնէ զուրկ ու նայնամիտ մը պիտի կարծուի եւ դաշնակցութիւնն ալ պիտի խճճուի այսպիսի անարժէք մարդոց կարեւորութիւն ընծայելուն համար : Արդ այս տեսակ մէկը՝ ի՞նչ հեղինակութիւն եւ ի՞նչ ազդեցութիւն կրնայ ունենալ , որ ինքնիշխանօրէն կարենայ նախորդ վարչութեան ձեռքէն զեկը առնել , ու սանձարձակ եւ անպատասխանատուօրէն գործել :

Պէտք է գիտնալ թէ՝ նախորդ ընթերցարանը երբէք դաշնակցութեան յատուկ վայր մը չէ եղած , այլ զուտ ազգային հաստատութիւն մը ամենուրեք համար ալ ազատ . բայց անդամներուն մէջ մասը գիւղերը կամ ուրիշ քաղաքներ փոխադրուելուն համար կարելի չէ եղած շարունակել որով գոյքերը յանձնած են պատ . թաղականութեան , վերջերս տեղացի նորահաս երիտասարդներ դիմած են թաղականութեան եւ կրկին ընթերցարան մը բանալու համար նախորդ ընթերցարանի գոյքերը խնդրած են , պայմանաւ որ եթէ երբէք ընթերցարանը քայքայուի գոյքերը կրկին պիտի յանձնեն թաղականութեան , որով թաղականութիւնը ձեռնտու եղած է իրենց եւ արտօնած է քաղաքին մէջ հանգանակութիւն մը կատարելու ի նպաստ նորահասատ ընթերցարանի , որուն մասնակցած են՝ յօդուածագրին լճացած ու ճահճացած կարծած Տօպրիշիքները անխորի , եւ այսպէս ամէն կողմէ աշակցութիւն գտնելով սկսած է կանոնաւոր վիճակ մը ստանալ , վստիղ ընթերցանի պէտքը զգալի էր քաղաքին մէջ : Ահա ճշմարտութիւնը որ կարող եմ հաստատուիլ նոյնիսկ ընթերցարանի քօլոր անդամոց ստորագրութեամբ :

Սակայն կը դարմանամ որ տեղական գետնութեանց եւ պատակտմանց առիթ տուող յօդուածներ մեծեւելու խոստումով հրապարակ ելլող թերթեր ի՞նչ շուտ կը մոռնան իրենց խոստումը ու կեցիւն մէկու մը հաճելի ըլլալու համար ամբողջ քաղաքի մը ժողովուրդը նախատող ու վերաւորող յօդուածներ կ'ապնջականեն :

Ժողովուրդը նախատելով , վերաւորելով կամ սպասելով երբէք գոհացուցիչ արդիւնքներ յառաջ չեն գար : Պաշտանի Տարագիրը

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՎԿԱՍԻ հայ եկեղեցիներու գրաւուած դրամագլուխները պատկանեալ եկեղեցիներուն յանձնելու համար ներքին դործոց նախարարութիւնը հրաման ըրած է նահանգապետներուն եւ տեղեկացուցած է փոխարքային :

—Կովկասի փոխարքային խորհրդատու խառն մարմին մը կազմուած է հայ եւ թուրք պատգամաւորներու քուէարքութեամբ : Հայերէն ընտրուած են բոխիկ Ստեփանեանց , փաստաբան Ս. Յարութիւնեան , բոխիկ Ա. Խատիսեան , Ա. Քալանթար եւ երկրաչափ Ղուկասն :

—ԳԱՆՁԱԿԷ՝Արշալոյս ին կը գրեն թէ Թրքական աւերումներէն հիմնայատակ են եղած հետեւեալ գիւղերը . Խօլտը 30 տուն , Ղարատաղլու՝ 80 տուն , փոքր-Սարով՝ 20 տուն , Մեծ-Սարով՝ 300 տուն , Բատաձոր՝ 300 տուն , Ղաղախ եւ Փետաբէկ՝ մօտ 100 տուն : Այս գիւղերու բնակիչները թողած իրենց աւերակ տունները կը թափառին գաւառին այլ եւ այլ կողմերը :

—ԲԵՒԵՐՍՊՈՒՐԿԻ հայ եկեղեցւոյ թաղ . Խուրհուրդը 100,000 ռուպլի նուիրած է Կովկասի արկածեալներուն ի նպաստ : Կառաւարկուի այդ գումարէն 30,000 ռուպլի Գանձակի եւ այն գաւառին կառատեալներուն յատկացնել :

—ԱՌԻՒՍ Կրթական Նախարար գըրած է Կովկասի փոխարքային թէ կո՞ւզէ արդեօք որ Կովկասի կըրթական շրջանին հոգաբարձու նշանակուի իշխան Կ. Արդուլթեան Երկայնաբազուկը , որ վարչաւայրի ղեկավար դպրոցին տնօրէնն է : Նախարարին այս հարցումը ռուս կառավարութեան զէպի հայերը լաւ տրամադրութիւն ունենալուն մէկ ապացոյցը կրնայ նկատուիլ . ամբողջ Կովկասի կրթական գործին վերին հսկողութիւնը Հայու մը յանձնել ... :

—ՓԻԼԻԿԷԻ մէջ կարեւոր վաճառականներու մասնակցութեամբ յանձնախումբ մը կազմուած է Կովկասի հայ արկածեալներուն նպաստ հանդանակելու պաշտօնով : Յանձնախումբին կանգաւակցին Տ. Տ. Մ. Թովմասեան , Գ. Թէվէքէլեան , Ե. Քիւրտեան , Գ. Թէմուրեանց եւ այլն :

—ՊՐԱԽԼԱՅԻ Տէր Ստեփան քհն. Կիւլիւմեան վերջնականապէս հրաժարած ըլլալով իր պաշտօնէն կը խնդրէ մեղմէ ծանուցանել թէ պատրաստ է ուրիշ քաղաքի մը մէջ քահանայադործութեան պաշտօն ընդունիլ . ուստի փափաքողներ բանակցութեան համար կրնան դիմել իրեն եւ գրել Պատրիարքարան , որուն իր հրաժարականը մատուցած է արդէն անդառնալիօրէն :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Որբախնամ ընկերութեանս պատանդամներէն քանիները անցեալներ անձամբ գործ . ժողովոյս զիւծած էին ընկերութեանս արդի վիճակին նկատմամբ տեղեկութիւն պահանջելու , ժողովս ուրախութեամբ պէտք եղած տեղեկութիւնները տուաւ : Գործ . Ժողովս որոշեց ներկայիւս յայտարա-

րել ընկ. պատ. անդամոց թէ, արդէն սկսած է ընկերութեանս ամբողջ հաշուեկշիռն պատրաստել եւ քիչ ատենէն պիտի ներկայացնէ գումարուելիք Բնգէ. Ժողովին. պարտն ու պատշաճն տնօրինելու համար:

Մնաժք Յարգանք

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Զատիկ Ժողովին Զ. Գ. Զատիկի
1906 թ. մարտ 20
Վառնա

Ի Խ Ի Ա Ի

Ս. Զատիկ Ժողովին պիտի իյնէ քէօյէրտէն գասապարա էնէն ապօնէլէրիսիկին կազմի ապօրէրը կէօնտէրմէլէրի րէճա օլունուր:

Տարմի սուրէթսէ գասապարա ապօրէրանյար տարի սէնէլմիզին իւրիւնէն ալը իրիմամ պօլլաւորը միւրհաղէ իտէրէք, պարի իւր ալթը ալլըգ ապօնմանը կէօնտէրմէլէր պիւզի մէմնուն իտէնէքէր: Տիւննանըն հէր թարաֆընտա կազմի բարասը պիւթիւն րէշին օլտըր հէրքէսէ մալիւ օլմալը տըր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Մըըրտան Տէյի թէկէրտի ապիտիթիթիկինէ պինտէն, ինկիթէրանըն Մըըրտա ալիտ օլտըրը իտտան իթտիկի դըթաւան թիւրք ասքըրէրի չէքիմէկէ պաշլամըլար. չու հալտէ եագրտա մէլքիւր միւնաղաա դաթիէն հալլ օլընմըլ օլաճադ:

—Թիւրքիա վէ Պուլկարիա պէյնիտէ կէօմրիւկ մէսէլէսինի թէագըգ իչիւն Սթանպօլա կէօնտէրիմիշ օլան դօմիսինը մալստու Սատրաղամ վէ նաղըրլարտան պաղըրար իյէ կէօրիւչտիւքտէն ոսնրա Ելըտըղա տալի տաճէթ օլընմըլ:

—Սթանպօլ չէհր էմինի Բըթիւն բաշլարը գաթլ իթտիթէն քիւրտ Պէտրհան բաշլանըն օլլու Ապիտիւր-Բաղադ պէյլէ Սթիւտար գօմանտանը Ալի Շաֆիլ բաշլանըն լէմէնէ սիւրիւլմէլէրինէ վիւքէլա մէճլիսի գարար վէրմիշ տիւր:

—Սթանպօլտան պիտիթիթիկի իւզըն, Աճէմիտան իյէ միւնաղաալը օլան արաղինին հագըղաթէն թիւրքիայա ալիտ օլտըրըն ալայի Պապը Ալի քեաղըլար պօլլաւորը ըմըլ, Շու հալտէ Բուսիանըն վէ ինկիթէրանըն թէչլիկի իյէ Աճէմ հիւքիւմէթինին թիւրք ասքըրէրի կէրի չէքմէք թէքիթինէ Պապը Ալի ասլա հէմմիյէթ վէրմէյէճէք իմիշ:

—Պաշլըն ինկիթէրանըն իտտանսը իյէ թիւրքիտա մատէն նիզամլարըն Պապը Ալի խաֆիթլէթմիշ օլուպ, եէնի նիզամնամէի սէֆարէթլէրէ պիտիթիւր:

միշ տիւր, Օլ սէպէպլէ 100 տէ 3 կէօմրիւկ զամմըն տէվլէթլէր գապուլ իթմէլ իտիլէր, չիմտի ինչա կէօթէրիլէր զանն օլընիյօր:

—Մաքէթէնիտա ժանտարմա ալալարըն արթըրըլմասը թէքլիթինէ Պապը Ալի տալի րաղի օլտու:

—Թիւրք ասքըրիլէսինտէ իտմէթ իտէն զապիթլէրին գօնթըրաթը Վիլհէլմին րէճաալ իւզըն պէշ սէնէ արթմըլ տըր: Քէզա տահա 9 ալման զապիթի արթաճադ ըմըլ:

—Սթանպօլ ճիւնայէթ մահքէմէսինտէն իտամա մահքիւմ օլան պէլմիդալը Ժօրիսին էօլիւմէն գուրթարըլմասը իչիւն Ֆրանսա վիւքէլաալ Սթանպօլտաքի էլիսինէ թալիմաթ վէրմիշ տիւր:

Տ Ա Ի Ի Լ Ի Է

Պուրկաղտան կիթմէքտէ օլան բօսթա թրէնի Եմապօլա եագըն եօլտան չըգուպ, 9 վալիւնարըն խասարտիտէ օլմասընա վէ պէշ քիշինին եարէլէնմէսինէ սէպէպ օլմուշ. պաշլա թէլէֆիաթ եօգտըր: Եօլլարըն պօղաղըլընտան նաշի իչպու գազանըն վաղու պօլլաղըր գօմիսինը մալստու թէտգըգ իյէ անլաղըլմըլ տըր:

—Պուլկարիտան թիւրք սինօրընա դօմիթա չէթալարը կէչմէմէք իչիւն, հարպիյէ միւնիսթէրի պիւր էմիթնամէ իյէ սինօր մուհաֆըլարընա թալիմաթ վէրմիշ վէ գարա գօլլարըն զիյա տէլէչմէսինի էմր էլլէմիշ տիւր:

Բ Ո Ւ Ս Ի Ա

Վիլհէնա—Բօրթ Արթուր մուհաֆըր ժէնէրալ Շթօսէլին հապսօլընմասը թաստիգ օլընիյօր: Շայանը հէմմիյէթ րէվայէթէ կէօրէ, Շթօսէլ Բօրթ Արթուրը ճարօնլըլարա թէսլիմ իթմէք իչիւն իքի միլիտն րուպլի ալմըլ ըմըլ:

—Բէթէրապուրկ.— Վլատիլօսթօթտան պիտիթիլիյօրքի, Մանչուրիա իւթիւնտէ գարա պուլուտլար տօաշմայա պաշլամըլ օլմասընտան նաշի Վլատիլօսթօթ գօմանտանը Մանչուրիտան գալտըն վէ չօնուլարըն չէքիլմէլէրինի էմր իթմիշ:

Գ Ա Ր Ա Տ Ա Ղ

Պիւր գաշ սէնէ մուգատտէմ Բուսիմէրաթօրը Գարաաղ Բրէնսինէ 25000 ատէտ Բէվօլվէրլէր իհտա իթմիշ իտի: Վիլհէնա կաղէթալարընտան պիթիին իչարը իւզըն, Բրէնս Նիքօլա մէլքիւր րէվօլվէրլէրի թիւրք սինօրը տալիլիտէ օլան եէնի բաղար սանճաղընը խրիսթիան վէ իսլամ:

էհալիսինէ տաղըթմագտա ըմըլ: Վիլհէնա գապիլէսի Բրէնսին պուհարէքէթի քէնտի մէմալիքինէ տալի թէհիլքէլի օլապիլէճէկինի իթմար իթմիշ իսէտէ, կէօնա Բրէնս ճէվապէն, հէր պիւր Սլալ Բրէնսի կիպի րէֆիլէրինի սիլաշլէ գուշաթմայա պօրճլու օլտըրըն պէյան իթմիշ:

Ս Ե Ր Պ Ի Ա

Պիւրկաղտան պա թէլէկրաֆիլար օլընտըղը իւզըն, Սեպիաա պուլընան Մաքէթնիա գօմիթէլէրին հիւքիւմէթ տաղըթմըլ, պիւր գաշ քիշիի հապսիթմիշ. պուլլար թահթը մուհաքէմէյէ ալընաճադ ըմըլար:

Պիւր գաշ սէնէ մուգատտէմ Պուլկար հիւքիւմէթի տալի Պուլկարիա տալիլիտէ պուլընան Մաքէթնիա գօմիթէլէրին իսմէն տաղըթտը ըտը, ֆագաթ ասլէն գօմիթէլէր պուլիւնէ գատար հէր թարաֆտա ըսպաթը վիճուտ իթմէքտէ տիւրլէր վէ իտէնէքէր, թարի Մաքէթնիա մէսէլէսի հալլ օլընանա տէկին:

—Սեպիանըն եէնի մէճլիսի վիւքէլաալ, Գրալ Ալէքսանտըր գաթլ իտէն զապիթլէրին ճէվապլանմասը իչիւն ուղուն միւլէքէրաթտան սօնրա, ինկիլթէրանըն միւնասիպ կէօրտիկի կիպի ճէզալալար թահթը գարարա ալմըլ տըր:

—Պէլկրատ Գրալըն եալէրի Միւշօլիշ զէվէսինի պիւր կէնճ զապիթլէ թու թմուշ օլմասը մէսէլէսինտէն տօլայլ գրալ Բէթրի հաղըթլէրի քէնտի վէլի ալտը պուլընան Բրէնս կէօրկինին տալի իքի հաֆթա սէրայտա հապս օլընմասըն էմր իթմիշ տիւր:

Ա Ճ Է Մ Ի Ս Տ Ա Ն

Ինկիլթէրա վէ Բուսիա պէյնիտէ ճէրէան իտէն միւնասէպաթ վէ միւլէքէրաթ նէթիճէսի օլարագ, Աճէմ քէօրֆէլիտէ Բուսիայա պաղը սուհուլէթլէր վէրիլմէսի իչիւն ինկիլթէրա հիւսնի ինչա կէօթէրիլէ, Տիւկէր թարաֆտան Բուսիա ինկիլթիլէրին տօթլըղըն գազանագ վէ բարաճա գօլալըլար էլտէ իթմէք իչիւն ինկիլթէրանըն պաղը արղուլարընա իքիթիֆա վէրմէկէ հաղըր պուլընիյօրլար, Նիհայէթ եագրնտա չու իքի տէվլէթ պէյնիտէ Ասիա գըթաալ իչիւն պիւր թագըմ մուլալաղտա օլան մէսէլէլէրտէն տօլայլ գաթիլէն իթիլաֆ (համաճայիլութիւն) հասըլ օլտճաղը մէմուլ օլընիյօր:

—Թէհրանտան Լօնտրայա պիւրտիթիլիկինէ պինտէն, պիւր Աճէմ տօթթօրը Սէյիսթան հհալի:

սինի էվրուալը տօթթօրլարա գարըլը թէչլիկ իթմիշ, էվրոալը տօթթօրլար գօլէրատան թուլթուլմուշ խասթալարը խասթահանէյէ նագլ իթտիլմէքտէ օլտըղալը իչիւն ճահիլ էհալի գըղուպ, խասթահանէյէ հիւճում իտէրէք իլաճլարը տէօթիւլսօնրա ինկիլթի գօնսօլոսհանէսինէ կիտուպ գօնսօլոսը վէ պիւր տօթթօրը պաստօնլէ տէօթիւլէ էհալի օլ գըղընլըգլէ կէօմրիւկլէր տալի հիւճում իտէնէք իմիշ իսէտէ, Բուս գօնսօլոսը պիւր պէօլիկ գաղաղլէ եէթիլուպ կէօմրիւկսանէի մուհաֆաղա իթմիշ տիւր:

ԹԻԻՃԱՐԻԷ

Զալիթէ վէ պագալիյէ մալէրին ֆիաթլարը թէպէտիւլաթ պուլմամըլ տըր. եանի կէչէն ճուճա էրթէսի կիւնքի նօմէրօմըլտա կէօթէրիլէն ֆիլաթլալըն ալնը տըր:

Եուճուրթա 100 ատէտի 4.60

Ն Ո Ր—Գ Ա Ր

Օրաթիւրթ Բաղաթալան, գրական
Բաժնեգիրք արտասահմանի համար տարեկան 40 ֆր. վեցամսեայ 25 ֆր. Հասցէ՝ Խոքաղուրթիւն «ՆՈՐ-ԳԱՐ» (Կոլկաս) Թիֆլիս

Մ Շ Ա Կ

Օրաթիւրթ քաղաքական, գրական
Բաժնեգիրք՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 րուպլի տարեկան:
Հասցէ՝ Խոքաղուրթիւն «ՄՇԱԿ» (Կոլկաս) Թիֆլիս

Ա Ր Շ Ա Ն Ո Յ Ս

Գրական, հասարակական, քաղաքական
Օրաթիւրթ
Բաժնետիրաղին օտար երկիրներ՝ 35 ֆր. Հասցէ՝ Խոքաղուրթիւն «ԱՐՇԱՆՈՅՍ» (Կոլկաս) Թիֆլիս

Լ Ո Ւ Ծ Ի Ն Տ Ա Կ

ՊՈՒԼԱՍԻ ԱՊՍՏԱՄԱՐԱՅՈՒՆ ԿԵՆՏՐԷ
Այս շատ գեղեցիկ հատոր մըն է թէ պարունակութեամբ եւ թէ կազմով. գինն է 5 ֆր. գիմի «Զայն Հայրենեաց» խմբագրութեան:

Одговорились А. Курбетиянъ
всѣмъ пекатъ а Д. Тодоровъ и С.не—Варна

